ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2023թ. հունիսի 25-ի նիստում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 74-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում:

ՑԱՆԿ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ 7

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ 12

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ 15

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ 17

ԼԳԲՏՔ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ 20

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 24

ՆԱԽԱԲԱՆ

Հանրային կարծիքի ձեւավորման հարցում մեդիայի դերն անհնար է գերագնահատել: Հաճախ ասում են՝ մեդիան իրականության արտացոլանքն է: Այո, բայց իրականություն կոչված բեմահարթակում այսօր այնպիսի խառնաշփոթ է, դերերի ու դերակատարների այնպիսի վերադասավորումներ են տեղի ունենում, այնքան արագ են փոփոխվում հասարակական-քաղաքական սցենարներն ու դրանց հեղինակները, որ հասարակ մարդու համար դժվար է տարբերակել՝ որն է ճիշտ, որը՝ սխալ, ով է ազնիվ, ով՝ ստախոս, ում հավատալ, ում կարեկցել. . . Այս ամենն ազդեցություն է թողնում նաեւ մեդիայի վրա: Լրատվամիջոցները գրում են բոլորի ու ամեն ինչի մասին: Մեդիայի մրցակցային միջավայրը ստիպում է հետ չմնալ, բաց չթողնել ոչինչ ու ոչ մեկին, սենսացիա չկա՝ սարքել. . . . միայն թե չկտրվեն լսարանին պահող թելերը: Ոչինչ, որ լրատվությանը հետեւող փաստերի ստուգման հարթակները հաջորդ օրը կարող են հերքել տարածված տեղեկատվությունը. դա նույնպես կարող է դառնալ լսարանին գրավող սենսացիա:

Այս իրավիճակում ամենից շատ տուժում են հասարակության խոցելի խմբերը, որոնց ձայնը շարունակում է մնալ կա՛մ չլսված, կա՛մ աղավաղումներով ներկայացված:
Մարդու իրավունքների ճանաչումը համաշխարհային արժեք է, սակայն իրավունքների եւ ազատությունների հավասարության հռչակումը միշտ չէ, որ վերաբերում է բնակչության բոլոր խմբերին: Կան հասարակության այնպիսի խմբեր, որոնք երբեմն իրենց վերահսկողությունից անկախ պատճառներով չեն կարողանում ամբողջությամբ իրացնել իրենց իրավունքները: Ժամանակի ընթացքում միջազգային հանրությունը սկսեց առանձնացնել մարդկանց այդպիսի կատեգորիաները՝ որպես «խոցելի խմբեր»: Այս տերմինն ակտիվորեն օգտագործվում է ՄԱԿ-ի հռչակագրերում, ծրագրերում, այլ փաստաթղթերում, ինչպես նաեւ տարբեր միջազգային զեկույցներում: Եվրահանձնաժողովը խոցելի բնակչությունը սահմանում է որպես «խմբեր, որոնք ավելի շատ են գտնվում աղքատության եւ սոցիալական մեկուսացման վտանգի ներքո, քան ընդհանուր բնակչությունը»: Պետությունների ազգային օրենսդրություններում նշված են բնակչության խմբեր, որոնք պետության եւ հասարակության կողմից հատուկ պաշտպանության կարիք ունեն, թվարկված են նաեւ լրացուցիչ իրավական օգնություն ցուցաբերելու հիմքերը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման համաձայն՝ «խոցելի բնակչությունը» հասարակության ցանկացած խումբ կամ մաս է, որը խտրականության, բռնության, բնական աղետների կամ տնտեսական ճգնաժամերի զոհ դառնալու ավելի բարձր ռիսկ ունի, քան մյուս խմբերը կամ հասարակության մնացած մասը»:

Խոցելիությունը կարող է կախված լինել մարդու ֆիզիոլոգիական վիճակից, պատմական, մշակութային, սոցիալական, բնապահպանական, քաղաքական կամ տնտեսական պայմաններից:

Խոցելի խմբերի մասին ընկալումները տարբեր երկրներում կարող են տարբեր լինել։ Կան, իհարկե, խոցելիության մասին համընդհանուր պատկերացումներ. ե՛ւ միջազգային, ե՛ւ ազգային մակարդակներում խոցելի խմբերի շարքին հիմնականում դասվում են երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, ծերերը, էթնիկ փոքրամասնությունները, կրոնական փոքրամասնությունները, ԼԳԲՏՔ+ անձինք, ազատազրկվածները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրները, միգրանտները եւ ներքին տեղահանվածները, հակամարտություններից տուժածները եւ այլն։

Հնարավոր է, որ որոշ երկրներում խոցելիության առանձին չափանիշներ, տարրեր չքննարկվեն, իսկ որոշ երկրներում հաշվի առնվեն։ Օրինակ, տարեցները, կանայք, ԼԳԲՏՔ+ անձինք, միգրանտները եւ տեղահանված անձինք տարբեր երկրներում կարող են խոցելի լինել շատ տարբեր պատճառներով, որոնք կարող են տեսանելի դառնալ միայն տվյալ միջավայրում առկա մարդու իրավունքների մակարդակի համատեքստում։ Էստոնիայում, օրինակ, խոցելի խմբերի թվին է դասվում ռուսալեզու բնակչությունը, ինչպես նաեւ սակավաբնակ վայրերում ապրողները, Շվեդիայում՝ շվեդերեն կամ անգլերեն չխոսողները, անկախ նրանից՝ տղամարդ են, թե կին, հարուստ են, թե աղքատ, տարեց են, թե երիտասարդ...։ Դա է պատճառը, որ ավելի նպատակահարմար է նկարագրել անհատի խոցելիությունը՝ միաժամանակ կարողանալով տեսնել խոցելիության համապատկերը, ընդգծելով հումանիզմի դրսեւորման անվերապահ կարեւորությունը։

Լրագրողներին ուղղված այս Գործնական ուղեցույցը նպատակ ունի մեկ անգամ եւս հիշեցնել լրագրողական էթիկայի համընդհանուր կանոնները, որոնց անհրաժեշտ է հետեւել, երբ մասնավորապես գրում ես զգայուն թեմաների, խոցելի խմբերի խնդիրների մասին։

Ելակետայինը՝ «մի՛ վնասիր» գաղափարով առաջնորդվելն է։

Լրագրողն իր պարտականությունները կատարելիս պիտի մտածի իր հրապարակումների հետեւանքների մասին, հավասարակշռի խոսքի ազատության հանրային շահը մարդկանց անձնական կյանքի իրավունքի հետ, չխախտի դժվար իրավիճակում գտնվողների իրավունքները, նրբանկատություն, տակտ ու կարեկցանք ցուցաբերի իր «հերոսների» հանդեպ։ Լրագրողը միշտ պիտի մտածի, թե իր պատմության հերոսների հանդեպ ինչ զգացմունքներ է արթնացնում ընթերցողի, հեռուստադիտողի մեջ։ Պետք է առաջնորդվի այն գաղափարով, որ խոցելի մարդիկ ոչ թե խղճահարության կարիք ունեն, այլ այնպիսի վերաբերմունքի ու պայմանների, որտեղ իրենց կզգան հավասար, օգտակար, հասկացված...

Էրագրողներից, ընդհանուր առմամբ, պահանջվում է պահպանել մասնագիտական սկզբունքները, որոնք հաճախ ծագում են էթիկայի, վարքագծի կամ պրակտիկայի կանոններից եւ սովորաբար կարգավորվում են պրոֆեսիոնալ անկախ մարմինների կողմից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Լրագրողական կազմակերպությունները տարիներով հաստատված ու մշակված էթիկական սկզբունքների կանոնագրեր ունեն: Այդպիսիք հարյուրավոր են, ու բոլորն էլ հորդորում են ապահովել ճշգրիտ, արդար եւ հիմնավոր տեղեկատվության ազատ փոխանակում:

Լրագրողական հնագույն կառույցներից մեկը՝ հեռավոր 1909 թվականին ԱՄՆ-ում հիմնադրված Պրոֆեսիոնալ լրագրողների ընկերակցությունը[1], Էթիկայի իր կանոնագրով[2] սահմանել է լրագրության հիմք հանդիսացող այս 4 սկզբունքները.

- ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՓՆՏՐԻՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՐՈ՛Ւ ԴՐԱ ՄԱՍԻՆ,
- ՄԻ՛ ՎՆԱՍԻՐ,
- ԳՈՐԾԻՐ ԱՆԿԱ՛Խ,
- ԵՂԻ՛Ր ՀԱՇՎԵՏՈՒ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ:

Այս հիմնարար սկզբունքների մի շարք ենթակետեր կարեւոր են սույն Ուղեցույցի համատեքստում.

- ✓ Հավասարակշռե՛ք հասարակության տեղեկատվություն ստանալու իրավունքն ու հնարավոր վնասը:
- ✓ Տեղեկատվությունը դիտարկեք համապատասխան համատեքստում:
- ✓ Խուսափե՛ք ինֆորմացիան պարզունակ կամ խեղաթյուրված ներկայացնելուց:
- ✓ Լսեք յուրաքանչյո՛ւր կողմին:
- ✓ Հիշե՛ք, որ ո՛չ ժամանակի սղությունը, ո՛չ էլ նյութի ձեւաչափը չեն արդարացնում անճշտությունը:
- ✓ Հստակ սահմանազատե՛ք փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից:
- ✓ Հիշե՛ք, որ լրագրող լինելն արտոնագիր չէ ամբարտավան ու անտեղի ներխուժման համար:
- ✓ Կարեկցանք դրսեւորեք նրանց հանդեպ, ում վրա կարող է ազդել ձեր հրապարակումը: Բարձր զգայունություն ցուցաբերեք անչափահասների, սեռական հանցագործությունների զոհերի կամ այնպիսի սուբյեկտների հանդեպ, որոնք անփորձ են կամ դժվարությամբ են համաձայնում խոսել: Հաշվի առեք մշակութային տարբերությունները:
- ✓ Զգո՛ւյշ եղեք անուններ հրապարակելիս: Պահպանեք անանունությունը այն աղբյուրների համար, որոնք կարող են վտանգի, հատուցման կամ այլ

[1] https://www.spj.org/index.asp
[2] https://www.spj.org/pdf/spj-code-of-ethics-bookmark.pdf

վնասի առջեւ կանգնել եւ ունեն տեղեկատվություն, որը հնարավոր չէ մեկ ուրիշից ստանալ:

- ✓ Անձի անունը չհրապարակվելու դեպքում նաեւ ձեռնպահ մնացեք այդ անձի նկարը կամ զբաղմունքի, կոչման, տարիքի, ազգության, սեռի եւ այլնի վերաբերյալ տվյալներ հրապարակելուց, որոնք հնարավորություն կտան նույնականացնել տվյալ մարդուն:
- ✓ Շատ զգույշ եղեք ինքնասպանության եւ ինքնասպանության փորձի մասին տեղեկություններ հրապարակելիս, հաշվի նստեք հարազատների զգացմունքների հետ:
- ✓ Մի՛ ընդգծեք էթնիկ ծագումը, սեռը, ազգությունը, զբաղմունքը, քաղաքական պատկանելությունը, կրոնական համոզմունքը, հաշմանդամությունը կամ սեռական կողմնորոշումը, եթե այդպիսի մանրամասները նվաստացուցիչ երանգավորում ունեն եւ կարեւոր չեն կոնկրետ համատեքստում:
- ✓ Գիտակցե՛ք, որ մասնավոր անձինք իրենց մասին տարածվող տեղեկատվությունը վերահսկելու, պահանջներ ներկայացնելու ավելի լայն իրավունքներ ունեն, քան հանրային գործիչները, հանրաճանաչ դեմքերը, նրանք, ովքեր ձգտում են իշխանության, ազդեցության կամ հասարակական ուշադրության:
- ✓ Հիշեք, որ օրենքի տեսանկյունից՝ հանցագործության մեջ կասկածվող անձը միշտ համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ: Իրավական գործի վերջնական արդյունքը պետք է հրապարակվի, եթե դրա մասին նախկինում տեղեկացվել է:
- ✓ Խուսափե՛ք սոսկ մարդկանց հետաքրքրասիրությունը բավարարելուց:
- ✓ Փաստական սխալները պետք է ուղղվեն, երբ հիմնավոր պահանջ է ներկայացվում «հերոսի» կամ նյութի հետ առնչություն ունեցող այլ անձանց կողմից:
- ✓ Ցանկացած ոք, ով ցանկանում է հերքել հրապարակումը, եթե իր պահանջն օրինական է, պետք է հնարավորություն ունենա դա անելու: Ուղղումները եւ հերքումները պետք է անհապաղ հրապարակվեն համապատասխան ձեւով, այնպես, որ դրանք հայտնվեն տեղեկատվությունը ստացողների նույնչափ ուշադրության կենտրոնում, ինչ տրվել էր հերքվող նյութին:

Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը[3], որն այսօրվա դրությամբ[4] ստորագրել են հայաստանյան 72 ԶԼՄ-ներ, առաջարկում է մասնագիտական էթիկայի հետեւյալ սկզբունքները:

Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

[3] https://ypc.am/wp-content/uploads/2021/05/Code-of-Ethics_arm_May-15_2021.pdf

[4] 2023 թվականի հունիսի 1

- ✓ Պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը:
- ✓ Առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ, ծերեր եւ հաշմանդամություն ունեցող անձինք են: Զգույշ լինել դեռահաս մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս:
- ✓ Երեխաներին վերաբերող կամ նրանց մասնակցությամբ նյութեր պատրաստելիս առաջնորդվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեդիախմբի մշակած՝ «Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկան» 5 փաստաթղթով:
- ✓ Երեխաներից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, լուսանկարը կամ նրան վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ՝ ստանալ երեխայի եւ նրա համար պատասխանատու անձի համաձայնությունը, ցանկալի է՝ գրավոր եւ անպայման երեխային հասկանալի լեզվով: Համաձայնությունը պետք լինի կամավոր, եւ բացառվի պարտադրանքի որեւէ ձեւ:
- ✓ Երեխան եւ նրա համար պատասխանատու անձը պետք է պարզորոշ հասկանան, որ իրենք խոսում են լրագրողի հետ, որը մտադիր է տվյալ նյութը տարածել լրատվամիջոցով:
- ✓ Զգտել, որ հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ չպատճառվի, չստիպել նրան՝ կրկին վերապրել իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները եւ իր կյանքի այլ ծանր պահերը, ասել կամ անել բաներ, որոնք հարկավոր են միայն տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար:
- ✓ Առողջական լուրջ խնդիրներ ունեցող, ինքնասպանության փորձ կատարած անձանց կամ նրանց հարազատների, ինչպես նաեւ ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ:
- ✓ Պահպանել անմեղության կանխավարկածը. մինչեւ դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի,

[5] **Guidelines for journalists reporting on children | UNICEF**
https://www.unicef.org/eca/media/ethical-guidelines

հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաքննության իրավունքի եւ հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ:

- ✓ Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

- ✓ Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:
- ✓ Որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:
- ✓ Որեւէ ձեւով չքարոզել պոռնոգրաֆիա, բռնություն, պատերազմ, ցեղասպանության եւ մարդկության դեմ կատարված հանցագործությունների հերքում:
- ✓ Զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները եւ հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ որպես տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների եւ հնարավոր զոհերի հարազատների եւ ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:

Հայաստանյան մամուլում խոցելի խմբերի լուսաբանման խնդիրներից մեկն էլ այն է, որ հաճախ լրագրողները հոդվածներ են հրապարակում այս կամ այն խմբի մասին՝ առանց տվյալ խմբի ներկայացուցիչների խոսքը ցիտելու կամ կարծիքը հարցնելու՝ հենվելով բացառապես պաշտոնական կամ փորձագիտական գնահատականների վրա: Որպես արդարացում՝ լրագրողները հաճախ պնդում են, թե այս կամ այն խմբի ներկայացուցիչը հրաժարվել է հարցազրույց տալ (սա հատկապես տարածված է կրոնական փոքրամասնությունների դեպքում), սակայն դա չի կարող արդարացում համարվել, եւ նյութում փոքրամասնության ներկայացուցիչների կարծիքի բացակայության դեպքում լրագրողը պետք է հստակ նշի, թե ինչ քայլեր է ձեռնարկել վերջիններիս հետ կապ հաստատելու համար, եւ

ինչու չի հաջողվել պատասխան ստանալ, ինչպես նաեւ պատրաստակամություն հայտնի հրապարակելու նոր նյութ՝ վերջիններիս արձագանքով։

Լրագրողական էթիկայի վերը նշված համընդհանուր սկզբունքներն ուղենիշային են ցանկացած թեմա լուսաբանող լրագրողների համար։ Իհարկե, աշխարհակարգերը, հասարակությունները եւ հանրային ընկալումները փոփոխվում են, ժամանակի ընթացքում վերանայվում են նաեւ տեղեկատվական դաշտի առաջնահերթությունները։ Հայաստանյան այսօրվա իրողություններն իրենց տրամաբանական ազդեցությունն են ունենում զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվող թեմաների, մոտեցումների ու թիրախային խնդիրների ընտրության վրա։

Այս Ուղեցույցում մենք առանձնացրել ենք մեր կարծիքով հայաստանյան հասարակության առավել խոցելի մի քանի կոնկրետ խմբերի լուսաբանման էթիկային առնչվող դրույթներ՝ հիմք ընդունելով մարդու իրավունքներով զբաղվող միջազգային կազմակերպությունների եւ լրագրողական պրոֆեսիոնալ միավորումների առաջարկությունները։

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

Երեխաների մասին հրապարակումների պարագայում անկյունաքարային են ՅՈՒՆԻՍԵՖ-ի մշակած էթիկական ուղեցույցները: Դրանք կոչված են աջակցելու լրագրողներին՝ ծառայել հանրային շահերին՝ առանց երեխաների իրավունքների խախտման:

Երեխաների հետ հարցազրույց անցկացնելու ուղեցույցների այս դրույթները կարեւոր շեշտադրումներ են անում՝ լրագրողական էթիկայի պահպանման տեսանկյունից:

- ✓ Խտրականություն մի դրեք հարցազրույցի համար երեխաների ընտրության հարցում՝ սեռի, ռասայի, տարիքի, կրոնի, կարգավիճակի, կրթական մակարդակի կամ ֆիզիկական կարողությունների պատճառով:
- ✓ Բեմականացում մի սարքեք: Երեխաներին մի խնդրեք պատմել կամ անել այնպիսի բան, որը կապ չունի նրանց սեփական պատմության հետ:
- ✓ Համոզվեք, որ երեխան կամ խնամակալը գիտեն, որ խոսում են լրագրողի հետ: Բացատրեք հարցազրույցի նպատակը եւ դրա նպատակային օգտագործումը:
- ✓ Ստացեք թույլտվություն երեխայից եւ նրա խնամակալից բոլոր հարցազրույցների, տեսանկարահանման եւ, հնարավորության դեպքում, վավերագրական լուսանկարների համար: Հնարավորության դեպքում, այս թույլտվությունը պետք է լինի գրավոր:
- ✓ Միշտ փոխեք անունը եւ թաքցրեք ցանկացած երեխայի վիզուալ ինքնությունը, որը ճանաչված է որպես.

    - սեռական բռնության կամ շահագործման զոհ,
    - ֆիզիկական կամ սեռական բռնության հեղինակ,
    - ՄԻԱՎ դրական կամ ՁԻԱՀ-ով ապրող, եթե երեխան, ծնողը կամ խնամակալը լիովին տեղեկացված համաձայնություն չեն տալիս,
    - մեղադրվել կամ դատապարտվել է հանցագործության համար,
    - ներկայիս կամ նախկին երեխա մարտիկ է,
    - ապաստան հայցող, փախստական կամ ներքին տեղահանված անձ է:

Հատկապես խոցելի են պատերազմական գործողությունների տարածքներում, հակամարտության գոտիներում ապրող երեխաները: Ուստի անհրաժեշտ է լավ մտածել՝ նախքան նրանց հետ հարցազրույց անելը, հատկապես, եթե դրա թեման հակամարտությունն է եւ երեխայի վկայությունը դրա մասին: Հարցրեք ինքներդ ձեզ՝ արդյո՞ք անհրաժեշտ է երեխաներին նման հարցեր տալ, մեծահասակը կարո՞ղ է նույն պատասխանները տալ երեխայի փոխարեն: Եթե այո, ուրեմն հանգիստ թողեք երեխաներին:

Սենսացիոն հաղորդումներից, որոնք երեխաներին ներկայացնում են որպես զոհ կամ խոցելի «թիրախ», պետք է ամեն գնով խուսափել:
Երեխաների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպություններն ընդգծում են երեխաների հետ հարցազրույցներ վարելու էթիկական առանձնահատկությունները:

Հիմնական սկզբունքները կարելի է ամփոփել հետեւյալ կերպ.

- ✓ Դրեք ձեզ երեխայի տեղը եւ հարգանքո՛վ վերաբերվեք նրան:
- ✓ Բացատրե՛ք, թե ինչպես եք օգտագործելու նյութը եւ ինչ եք ուզում նրան հարցնել:
- ✓ Գտեք հարցազրույցի հարմար վայր եւ փորձեք օգնել, որ երեխան հնարավորինս հարմարավետ զգա: Անհրաժեշտության դեպքում հարցազրույց վերցրեք երեխաների խմբից, այլ ոչ թե մեկ երեխայից՝ նրանց վստահությունը մեծացնելու համար:
- ✓ Մի՛ սահմանափակեք ձեզ եւ երեխային. մի՛ շտապեք ավարտել հարցազրույցը: Հաճախ մի՛ ընդհատեք երեխային, թող նա իր խոսքերով պատմի իր պատմությունը:
- ✓ Երեխային մի՛ տրամադրեք, թե խոսելու դիմաց ինքն ինչ-որ բան (նվերներ, գումար, սնունդ կամ մի այլ բան) կարող է ստանալ:
- ✓ Երբ հասկանում եք, որ երեխան անհարմար է զգում, կամ դուք շոշափել եք չափազանց զգայուն թեմա, դադարեցրե՛ք հարցազրույցը: Աշխատեք կենտրոնանալ ավելի պակաս զգայուն հարցերի վրա:
- ✓ Հարցազրույցը միշտ ավարտեք լավ նոտայով եւ շնորհակալություն հայտնեք երեխային ժամանակի եւ ջանքերի համար:

ՀՀ արդարադատության նախարարություն Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից 2017 թ. հրապարակված՝ Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույցը[6] կարեւոր հանձնարարականներ է տալիս զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ:
Մասնավորապես, տեղին է հիշատակել երեխայի սոցիալապես անապահով եւ խոցելի լինելու մասին հաղորդումներ/նյութեր պատրաստելու էթիկական սկզբունքները. «Լրատվամիջոցը (լրագրողը) պետք է օգտագործի երեխայի անձնական տվյալներն ապանձնավորելու միջոցներ (փոխել երեխայի անունը, օգտագործել միայն անվան առաջին տառերը, քողարկել լուսանկարում երեխայի դեմքը, փոխել երեխայի ձայնը եւ այլն)՝ կանխելու հաղորդման հրապարակման արդյունքում հնարավոր բացասական հետեւանքները երեխայի համար (շրջապատում, դպրոցում այլ երեխաների կողմից ծաղրանքի ենթարկվելը):
Երեխայի սոցիալական ծանր դրության մասին հաղորդումներում լրագրողը կարող է չապանձնավորել երեխայի անձնական տվյալները, եթե առկա է օրինական ներկայացուցչի համաձայնությունը, երեխայի ծանր դրությունը

[6] https://www.moj.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf

անմիջական սպառնալիք է ստեղծել երեխայի կյանքի կամ առողջության համար եւ հնարավոր չէ երեխային ապանձնավորելու միջոցով ստանալ հանրության աջակցությունը նրան ծանր դրությունից դուրս բերելու համար: Լրատվամիջոցը պարտավոր է ապանձնավորել սեռական բռնության կամ շահագործման զոհ, ֆիզիկական կամ սեռական բռնություն գործադրած, հանցագործության կատարման համար դատավարտված կամ մեղադրվող երեխայի անունը, ազգանունը, բնակության վայրը եւ նրան նույնականացնող այլ տվյալները, քանի որ նման դեպքերում երեխաների համար հաճախ ծագում են բացասական հետեւանքներ (օրինակ, սեռական ոտնձգության ենթարկված երեխային կարող են շրջապատում ծաղրել): Այսպիսով, լրագրողն ազատվում է երեխայի անձնական տվյալներն ապանձնավորելու պարտականությունից, եթե առկա է երեխայի (օրինական ներկայացուցչի) համաձայնությունը եւ անձնական տվյալների հրապարակումը չի վնասի երեխայի լավագույն շահը կամ եթե հրապարակումն ինքնին բխում է երեխայի լավագույն շահից»:

Գործնական օգնություն կարող ենք գտնել նաեւ ՀՀ Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակի կողմից 2018 թվականին պատրաստված «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը»[7] ձեռնարկում, որը պարունակում է նաեւ հավելվածներ՝ Երեխայի իրավունքների կոնվենցիայի ամփոփ շարադրանքը, երեխայի իրավունքներին առնչվող ներպետական եւ միջազգային օրենսդրության ցանկը, միջազգային կազմակերպությունների ուղենիշները, անձի համաձայնությունը ստանալու փաստաթղթի օրինակելի ձեւը, երեխայի իրավունքների ոլորտի կազմակերպությունների ցանկը եւ այլն, որոնք ամփոփ զետեղում են երեխայի իրավունքների մասին իրավական անհրաժեշտ բազան եւ որոշ պրակտիկ տեղեկություններ:

[7] https://www.ombuds.am/images/files/53988c684fec6a6dd0af986eff694827.pdf

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

Կանանց նկատմամբ բռնության, ներառյալ ընտանեկան բռնության դեմ պայքարը մարդկության գերխնդիրներից է եւ, ցավոք, այսօր էլ մնում է արդիական։ Խորհուրդ է տրվում բռնության ենթարկված կանանց հետ հարցազրույցի ուղարկել միայն նման հրապարակումների փորձառություն ունեցող կին լրագրողների, քանի որ տղամարդիկ, որքան էլ նրանք զգայուն լինեն, կարող են վախ եւ անհանգստություն առաջացնել բռնության ենթարկված կանանց մեջ։

Լրատվամիջոցները պետք է՝

- ✓ կատարեն բռնության պատճառների խորքային վերլուծություն եւ այն ներկայացնեն որպես համակարգային խնդիր,
- ✓ խուսափեն իրադարձությունների կողմնակալ մեկնաբանումից եւ լինեն չեզոք,
- ✓ կանանց նկատմամբ բռնությունը ներկայացնեն որպես մեկ անձի կողմից մյուսի նկատմամբ իշխանություն ունենալու եւ վերահսկողության արտահայտում,
- ✓ բարձրացնեն իրազեկվածությունը կանանց նկատմամբ բռնության հանցավոր բնույթի, բռնարարների պատասխանատվության եւ բռնության ենթարկվածներին մատուցվող աջակցության վերաբերյալ։

Գործնականում, այս խոցելի խմբի խնդիրների լուսաբանումը լրագրողական էթիկայի համընդհանուր կանոնների կոնկրետացումն է։

- ✓ Կանանց նկատմամբ բռնության մասին հրապարակումների լավ վերնագրերը չպետք է սկսվեն սենսացիոն ձեւակերպումներով, օրինակ՝ «դաժան», «սարսափելի», «ցնցող», «սահմռկեցուցիչ» եւ այլն։
- ✓ Լրագրողը պետք է տեղեկացնի հարցազրույցի տարածման մասին (օրինակ՝ համացանցով)։ Հարցազրույց տվողը պետք է կարողանա ընկալել իր մասնակցության հետեւանքները։
- ✓ Բռնության ենթարկված կամ բռնություն կատարած անձանց պատմությունները ներկայացնելիս կամ խոսքը մեջբերելիս պետք է պաշտպանվի նրանց գաղտնիությունը, եւ դա պետք է հիմնված լինի լրագրողական էթիկայի՝ չվնասելու սկզբունքի վրա։ Մի՛ օգտագործեք իրական անուններ, եթե մարդիկ նույնականացվելու հատուկ համաձայնություն չեն տվել։
- ✓ Մի՛ հաղորդեք մանրամասներ՝ անձնական կամ աշխատանքային հասցե, պաշտոն, երեխաների դպրոցի մասին կամ տուժածին եւ նրա ընտանիքի անդամներին նույնականացնող այլ բնույթի տեղեկություններ, որոնք կարող են հետագայում ռիսկի ենթարկել բռնության ենթարկվածներին։

- ✓ Խուսափեք այնպիսի վայրերից, որտեղ ինչ-որ մեկը կարող է լսել կամ ընդհատել հարցազրույցը: Ապահովեք, որ հարցազրույցները չափազանց երկար կամ հուզականորեն հոգնեցուցիչ չլինեն:
- ✓ Հնարավորություն տվեք բռնության ենթարկված անձին՝ ցանկության դեպքում դադարեցնել հարցազրույցը:
- ✓ Խուսափեք դատապարտող լեզվից: Բռնության ենթարկված անձի պատմության, նրա սեռական կյանքի, հագուկապի, գտնվելու վայրի, կատարած գործողության կամ բռնության տեղի ունենալու ժամի մասին գրելը կարող է ենթադրել բռնության ենթարկվածի պատասխանատվություն: Լրատվամիջոցի հրապարակման մեջ բռնության պատասխանատվությունը չպետք է տեղափոխվի հանցագործից դեպի վերապրած/զոհ:
- ✓ Աշխատեք չընդհատել, երբ բռնության ենթարկվածը պատմում է իր հետ պատահածի մասին: Նախ ուշադիր լսեք, կասկածներ մի արտահայտեք. հետո դուք հնարավորություն կգտնեք նրա ասածների իսկությունը ստուգելու:
- ✓ Լրատվամիջոցը պետք է խուսափի բռնության ենթարկվածներին եւ հանցագործներին ոչ ադեկվատ վիճակում եւ կարծրատիպային ձեւով պատկերող լուսանկարներ/տեսանյութեր հրապարակելուց:
- ✓ Երբեք չի կարելի օգտագործել բռնության ենթարկված կնոջ երեխաների լուսանկարները, տեսանյութերը: Սա վերաբերում է նաեւ ընտանեկան բռնության հետ կապված ընտանիքների բոլոր երեխաներին:
- ✓ Երեխաներ ունեցող կանանց նկատմամբ բռնության մասին հրապարակումներ պատրաստելիս պետք է հիշել, որ նման դեպքերում երեխաները միշտ ընտանեկան բռնության զոհ են դառնում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն:
- ✓ Կնոջ նկատմամբ բռնությունը, հատկապես սեռական բռնությունը ուղեկցվում է մեղքի, ամոթի զգացումով, ուստի հարցազրույցը պետք է վարվի՝ օգտագործելով խնամքով ընտրված բառեր, որոնք ոչ մի կերպ չեն ենթադրում, որ բռնության ենթարկվածն ինչ-որ սխալ բան է արել, կամ որ եղածի համար ինքն է պատասխանատու:
- ✓ Սեռական բռնության լուսաբանման համար անհրաժեշտ է հատուկ զգուշություն եւ էթիկական մեծ նրբանկատություն: Այն պահանջում է հարցազրույցներ վարելու մասնագիտական հմտություններ: Հատկապես կարեւոր է չտալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ «ինչո՞ւ չլքեցիք նրան», կամ՝ «ինչո՞ւ վերադարձաք նրա մոտ»: Պետք է նկատի ունենալ, որ կինը շատ դեպքերում վերադառնում է բռնարարի մոտ՝ բազմաթիվ պատճառներով: Դա կարող է լինել ինքնավստահության եւ իր նկատմամբ հավատի կորուստը, ռեսուրսների եւ աջակցության բացակայությունը, ոստիկանության եւ միջավայրի մարդկանց ոչ ադեկվատ արձագանքը, բռնարարի անպատժելիությունը … :

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

Ռազմական գործողություններից, հակամարտություններից տուժածների լուսաբանման ժամանակ պահանջները բավականին խիստ են եւ հիմնված են զոհերի հարազատների եւ լսարանի նկատմամբ մեղմ եւ սրտացավ վերաբերմունքի վրա։
Տուժածների մասին գրելը, նրանց խնդիրները լուսաբանելը հաճախ էմոցիոնալ առումով շատ բարդ է լինում։ Գրել մարդկանց մասին՝ իրական մարդկանց, որոնք զավակներ ու հարազատներ են կորցրել, որոնք գերեվարվել են, հաշմվել են կամ բռնության ենթարկվել, որոնք բռնագաղթել են, կորցրել տուն եւ ունեցվածք, որոնք հաճախ ապրում են ամենօրյա լարվածության մեջ, անտանելի պայմաններում, հեշտ խնդիր չէ։

Լրագրողները երբեմն ասում են, թե հանրությունը «հոգնել է կարեկցելուց», մարդիկ խուսափում են վատ լուրեր, դժբախտ պատմություններ լսել։ Չնայած դրան, հատկապես պատերազմների եւ հակամարտությունների սրման ժամանակ լրատվամիջոցներն ակտիվորեն լուսաբանում են փախստականների ու բռնագաղթած անձանց խնդիրները։ Այդ իրավիճակներում լրագրողները պետք է նկատի ունենան, որ փախստականներից շատերը հաճախ խուսափում են հարցազրույցներ տալուց, նախ՝ որովհետեւ չեն հավատում, որ մամուլի հրապարակումները կնպաստեն իրենց խնդիրների լուծմանը, հետո՝ չեն ցանկանում թիրախավորվել, վախենում են, որ տեղական իշխանություններն անբարյացակամորեն կտրամադրվեն իրենց նկատմամբ, եւ վերջապես՝ չեն ցանկանում վերապրել անցած տառապանքները։ Նման անձանց հետ հարցազրույցի զգալի փորձ չունեցող լրագրողների համար կարող է օգտակար լինել, եթե հարցազրույցի գնան աջակցություն ցուցաբերող որեւէ կազմակերպության աշխատակցի հետ, որը կօգնի վստահություն ձեւավորել եւ զրույցը զգուշորեն տանել տրավման հնարավորինս մեղմելու հունով։
ԶԼՄ-ները խուսափում են ցույց տալ ռազմական գործողությունների կամ աղետների ճնշող հետեւանքները։ Այնպես որ, բռնության եւ դիակների տեսարանները չեն ցուցադրվում՝ առանց դրա համար բավարար հիմքերի։ Մարդկային զոհերը, անդամահատված մարդիկ, որոնց թվում կարող են լինել երեխաներ, չափազանց ուժեղ ազդեցություն են ունենում հանդիսատեսի վրա։ Բռնության ցուցադրման խիստ սահմանափակումները լուրջ հիմքեր ունեն, քանի որ թույլ չեն տալիս իջեցնել լսարանի զգայունության շեմը։ Այստեղ, իհարկե, տեղին է հիշել նաեւ խմբագրական անկախության պաշտպանության եւ հանրային շահին հակասող որեւէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտության մասին։

Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի **«Պատերազմի, զինված բախումների եւ ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի ՈՒՂԵՑՈՒՅՑ»**-ը[8] տալիս է մի շարք կարեւորագույն հարցերի պատասխաններ, որոնք ուղենիշային կարող են լինել այդ խնդիրները լուսաբանող լրագրողների համար:

Հրապարակե՞լ անհետ կորածների, ռազմագերիների, գերեվարվածների լուսանկարներ եւ այլ անձնական տվյալներ, թե՞ ոչ:

- ✓ Թեպետ անհետ կորածների, ռազմագերիների եւ գերեվարված անձանց տվյալները, այդ թվում՝ լուսանկարները չտարածելը հակասում է տեղեկությունները չկոծկելու եւ տեղեկատվության ամբողջականության էթիկական սկզբունքներին, այդուհանդերձ, տվյալ պարագայում անձնական տվյալների պաշտպանության եւ հատկապես ռազմագերիների եւ գերեվարված անձանց անվտանգության հանրային շահը գերակա է, մանավանդ եթե նկատի առնենք, որ հակառակորդը կարող է նաեւ դրանք օգտագործել քաղաքական եւ այլ մանիպուլյացիաների նպատակով:
- ✓ Անձի համաձայնությունը ստանալու անհնարինության պարագայում անձնական տվյալների, այդ թվում լուսանկարների տարածումը կարող է թույլատրելի լինել, եթե յուրաքանչյուր առանձին դեպքի համար առկա է նրա ընտանիքի անդամների համաձայնությունը: Համանման դեպքերում անհրաժեշտ է սահմանափակվել այն տվյալների տարածումով, որոնք ընտանիքի կամ հարազատների անմիջական տրամադրության տակ են կամ ստացվել են պաշտոնական ոչ գաղտնի աղբյուրներից: Ինչպես նաեւ տարածումից առաջ համոզվել, որ ընտանիքի անդամները եւ հարազատները գիտակցում են անձնական տվյալների հանրայնացման հետ կապված ռիսկերը՝ շանտաժ, մեքենայություններ եւ նման այլ չարաշահումներ:
- ✓ Հարկ է անհետ կորածների, ռազմագերիների, գերեվարվածների հարազատներին բացատրել անձնական տվյալների եւ դրանց գաղտնիության կարեւորությունը, ինչպես նաեւ՝ դրանց հրապարակման դեպքում հնարավոր բոլոր հետեւանքները:
- ✓ Խորհուրդ է տրվում նախկին կամ պահվող ռազմագերուն, գերեվարված անձին վերաբերող հրապարակման մեջ չգործածել գերեվարած կողմի տարածած որեւէ լուսանկար, տեսանյութ, տեքստ կամ հղում, եթե նույնիսկ նախկին ռազմագերին կամ պահվող ռազմագերին կամ նրա հարազատները ֆորմալ առումով համաձայնել են այդ բովանդակության հրապարակմանը. տուժած անձինք երբեմն բավականաչափ հստակ չեն գիտակցում սեփական հեռագնա շահերը եւ առանց մասնագետների հետ

[8] https://ypc.am/wp-content/uploads/2021/09/Guidelines_Conflicts_Ed.-Supplemented_arm.pdf

> քննարկելու՝ տալիս են իրենց համաձայնությունը: Այսինքն, այս պարագայում, տուժած անձի համաձայնությո՛ւնն էլ կարող է որոշիչ չլինել էթիկայի տեսանկյունից:

Օգտակար ռեսուրս է նաեւ Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) #66 կարծիքը **Ռազմագերիների եւ գերեվարված քաղաքացիական անձանց մասին հրապարակումների եւ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ**[9]:

ՏՎԽ-ն ընդգծում է. «Թեեւ պատերազմի մասին լրատվությունը հասարակական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, եւ հանրությունն ունի դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու լեգիտիմ պահանջ, զինված հակամարտության մասնակցի, մասնավորապես, ռազմագերիների վերաբերյալ տեղեկատվությունը ԶԼՄ-ների կողմից չպետք է հանգեցնի անձի արժանապատվության ոտնահարմանը եւ անձնական կյանքի գաղտնիության խախտմանը: Պատերազմական գործողությունները, ռազմական բախումները կամ դրանց հետեւանքերը լուսաբանելիս լրագրողներն ունեն կարեւոր առաքելություն. նրանք կարող են նպաստել հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հանրությանը տրամադրելով անաչառ եւ օբյեկտիվ տեղեկատվություն: Երբեմն էլ լրագրողների հրապարակումներն օգնում են գտնել գերեվարված անձին կամ պաշտպանել նրա իրավունքները: Այս առումով նրանց հարազատներն ունեն տեղեկություն ստանալու օրինական շահ: Այդուհանդերձ, տեղեկատվությունը տրամադրելիս նույնիսկ նման իրավաչափ նպատակները լրագրողին չեն ազատում այլոց իրավունքները եւ ազատությունները հարգելու պարտականությունից: Սա է հակամարտությունները լուսաբանելու առանձնահատուկ դժվարությունը՝ ցուցաբերել նրբանկատություն եւ տարածել ճշգրիտ, անաչառ ու պատասխանատու տեղեկատվություն»:

[9] https://idcarmenia.am/conclusion/razmagerineri-ev-gerevarvats-qaghaqaciakan-andzanc-veraberyal-hraparakumnere-ev-andznakan-tvyalneri-pashtpanutyune/

ԼԳԲՏՔ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

Ամբողջ աշխարհում գենդերային եւ սեռական փոքրամասնությունները բախվում են խտրականության, նախապաշարմունքների եւ բռնության տագնապալի մակարդակի, նրանց կյանքի մասին խոսելը համարվում է տաբու, եւ դրա պատճառով լրատվամիջոցները գրեթե չեն անդրադառնում այդ խնդիրներին: Լրագրողները հնարավորություն ունեն հանրության մեջ տարածված ապամարդկայնացնող կարծրատիպերը փոխարինելու գենդերային եւ սեռական բազմազանության մասին պատկերացումներով, գիտելիքի վրա հիմնված տեղեկատվությամբ: Դա անելու համար լրագրողից պահանջվում է մի կողմ դնել կողմնակալությունը եւ առաջնորդվել լրագրողական էթիկայի՝ արդարության, ճշգրտության եւ զգայունության սկզբունքներով:

Ստորեւ ներկայացվում են ԼԳԲՏՔ+ համայնքների լուսաբանումը բարելավելու վերաբերյալ **Հայաստանի լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմնի խորհուրդները:**

- ✓ Նախքան սեռական եւ գենդերային բազմազանության մասին գրելը՝ տեղեկացեք այն խնդիրների մասին, որոնց բախվում են ԼԳԲՏՔ+ համայնքի մարդիկ ձեր միջավայրում: Դա անելու լավագույն միջոցը տեղական համայնքի ներկայացուցիչներին հանդիպելն է: Թեեւ որոշ մարդիկ անվտանգության նկատառումներից ելնելով կամ ԶԼՄ-ների կողմից նախկինում եղած վատ հրապարակումների պատճառով կարող են վարանել հանդիպելու ձեզ, այնուամենայնիվ, կարեւոր է հանդիպման հրավերը տեղ հասցնելը:
- ✓ Որոշ լրատվամիջոցներ չարաշահում են սեռական եւ գենդերային փոքրամասնությունների թեման՝ իրենց լսարանը մեծացնելու միտումով: Այս մոտեցումները վտանգավոր են եւ ոչ էթիկական: Այս զգայուն խնդրի լուսաբանումը պետք է հասարակությանը կրթելու եւ տեղեկացնելու գործառույթ կատարի: Սա լրագրողից պահանջում է օգտագործել ճշգրիտ, մատչելի լեզու եւ հստակ բացատրել ցանկացած տերմին, որը կարող է անծանոթ լինել:
- ✓ Լույս սփռելով տաբուների վրա՝ լրագրողները մարտահրավեր են նետում խարաններին՝ կարծրատիպերն ու խտրականությունը փոխարինելով ըմբռնողությամբ եւ հարգանքով: Պատասխանատու լրատվամիջոցներն այդ կերպ նպաստում են խոցելի համայնքները պաշտպանելու եւ մարդու իրավունքներն առաջ մղելու գործին:
- ✓ ԼԳԲՏՔ+ անձանց մասին հրապարակումներ պատրաստելիս խորհրդակցեք ձեր շրջապատի ԼԳՆՏՔ+ անձանց հետ՝ արդյո՞ք ձեր օգտագործած տերմիններն ընդունելի են իրենց համար: Աղբյուրները գեյ

կամ տրանսգենդեր անվանումներով ներկայացնելու փոխարեն թույլ տվեք նրանց օգտագործել իրենց նախընտրած տերմինաբանությունը:

- ✓ Պատահում է, որ սեռական փոքրամասնությունների մասին առասպելներ եւ ատելության խոսք տարածողներից ոմանք ներկայանում են որպես փորձագետներ, օրինակ՝ բժիշկներ, իրավաբաններ, հոգեւոր առաջնորդներ, հոգեբաններ եւ գիտնականներ, որոնք կա՛մ չգիտեն, թե ինչ են խոսում, երբ խոսքը վերաբերում է ԼԳԲՏՔ+ հիմնախնդիրներին, կա՛մ միտումնավոր ապատեղեկատվություն են տարածում՝ իրենց սեփական համոզմունքները մատուցելու համար: Մարդիկ հաճախ վստահում են այդ աղբյուրներին՝ հիմնվելով բացառապես նրանց մասնագիտության կամ հասարակության մեջ ունեցած դիրքի վրա, ուստի շատ կարեւոր է տեղեկատվության ցանկացած աղբյուրի հիշատակած փաստերի ստուգումը:
- ✓ Պետք չէ գնալ ծայրահեղ կարծիքների հետեւից: Երբ դուք մեջբերում եք միայն աղբյուրներ, որոնք ինչ-որ բանի վերաբերյալ ունեն բեւեռային տեսակետներ, դուք բաց եք թողնում մարդկանց ճնշող մեծամասնությանը, որոնց համոզմունքները, հավանաբար, գտնվում են այդ ծայրահեղությունների միջեւ:
- ✓ ԼԳԲՏՔ+ իրավունքների ակտիվիստների եւ մարգինալացման ենթարկված այլ խմբերի ընդհանուր կարգախոսը սա է. «Մեր մասին ոչինչ՝ առանց մեզ»: Սեռական եւ գենդերային բազմազանությունը լուսաբանելիս լսեք այդ համայնքի անդամների տեսակետները: ԼԳԲՏՔ+ մարդիկ շատ ավելին գիտեն այն խնդիրների մասին, որոնք ազդում են իրենց առօրյա կյանքի վրա, քան որեւէ արտաքին փորձագետ կամ զեկույց երբեւէ կարող է ֆիքսել: Մարդկանց ուղղակիորեն մեջբերելը նաեւ ավելացնում է այն մարդկային տարրը, որը կօգնի ձեր պատմություններն ավելի հեշտ հասցնել լսարանին:
- ✓ Հարցազրույցը սկսելուց առաջ համոզվեք, որ ստացել եք խոցելի աղբյուրների «տեղեկացված» համաձայնությունը: Սա նշանակում է բացատրել, թե երբ եւ որտեղ կհրապարակվի ձեր պատմությունը՝ անպայման ներկայացնելով նաեւ հրապարակման հետ կապված ցանկացած իրատեսական վտանգ: Ձեր նպատակը ոչ թե աղբյուրներին վախեցնելն է, այլ նրանց պաշտպանելը եւ էթիկան չխախտելով ներկայացնելը: Երբեմն ամենաանվտանգ բանը, որ կարելի է անել, ռիսկային աղբյուրները անանուն կամ կեղծանուններով ներկայացնելն է: Թերեւս արժե նաեւ հեռացնել աննշան թվացող մանրամասները, որոնք կարող են նույնականացնել հարցազրույցի մասնակիցներին:
- ✓ Ձեր ընտրած լուսանկարները, տեսանյութերը պետք է համապատասխանեն ձեր պատմությանը եւ խուսափեն մարդկանց կարծրատիպային կերպարներով պատկերելուց: Կարեւոր է նաեւ չգերսեքսուալացնել ԼԳԲՏՔ+ մարդկանց: Եթե ձեր պատմությունը վերաբերում է առողջապահական խտրականությանը, մի օգտագործեք անկողնում կիսամերկ պառկած տղամարդկանց լուսանկարներ: Ընդհանուր ծիածանի դրոշները եւ գենդերային նշանները կարող են

ազդանշան տալ հուշել ձեր լսարանին, որ պատմությունը վերաբերում է ԼԳԲՏՔ+ խնդիրներին, սակայն այս պատկերները նույնպես չափազանց շատ են օգտագործվում: Հարցրեք ինքներդ ձեզ՝ «ինչի՞ մասին է իրականում իմ պատմությունը»: Եթե դա առողջապահություն է, օգտագործեք բժշկական պատկերներ, եթե խոսքը վերաբերում է խտրականության գործին, օգտագործեք դատավարական պատկերներ: Պատահում է, որ ձեր պատմությոն հերոսները չեն ցանկանում տեսախցիկի առջեւ խոսել, նույնականացվել: Նման դեպքերի համար կարելի է օգտագործել գրաֆիկական, անիմացիոն եւ պատկերային այլ միջոցներ:

- ✓ Շատ հաճախ ԼԳԲՏՔ+ մարդկանց մասին լուրերը կենտրոնանում են ցավի, տառապանքի եւ բռնության վրա: Սրանք կարող են տխուր եւ կանխատեսելի իրողություններ լինել, բայց այդ մարդիկ միայն տրավմաներով չեն ապրում: Դուրս եկեք զոհերի շրջանակից եւ փորձեք ներկայացնել ձեր հերոսների դրական պատմությունները:
- ✓ Եթե կարծում եք, որ դեռ չեք կարող ազնվությամբ, ճշգրտությամբ եւ զգայունությամբ լուսաբանել ԼԳԲՏՔ+ անձանց խնդիրները, գտեք գործընկերոջ, որը կարող է դա անել:
- ✓ Եվս մի խորհուրդ. խոցելի այս խմբի մասին հրապարակումները սոցիալական ցանցերում տարածելիս շատ զգույշ եղեք: Եթե համոզված չեք, որ կկարողանաք վերահսկել հանրային արձագանքները եւ անմիջապես հեռացնել ատելության խոսք կամ վիրավորանք պարունակող բովանդակությունը, ավելի լավ է սահմանափակել մեկնաբանությունների հնարավորությունը: Խոսքը «տաբուն» չխախտելու եւ թեմայի հանրային քննարկումները սահմանափակելու մասին չէ, այլ մարդկանց իրավունքները պաշտպանելու, մարդկանց չթիրախավորելու, քաղաքական շանտաժի գործիք չդարձնելու, գիտելիքի հանրայնացման եւ պատասխանատու լրագրության մասին:

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Մերօրյա լրագրության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում արհեստական բանականության (ԱԲ) միջոցով ստեղծված արտադրանքը։ ԱԲ-ն նոր հնարավորություններ ընձեռող՝ այսպես ասած՝ արագ արձագանքման գործիք է, որն օգնում է ժամանակ եւ միջոցներ խնայել։ Այն լրագրողի փոխարեն կարող է ե՛ւ տվյալներ հավաքել ու համադրել, ե՛ւ վերլուծություններ անել, ե՛ւ անգամ՝ հոդվածներ գրել։ Բայց այդ նոր հնարավորությունն իր հետ նաեւ նոր մարտահրավերներ է բերում։ Յուրաքանչյուր լրագրող պետք է իմանա, որ արհեստական բանականության ստեղծած արտադրանքում եղած էթիկական խախտումների պատասխանատուն միշտ ինքն է՝ մարդը՝ լրագրո՛ղը։

Լրագրողական էթիկայի կանոնները բարոյական վարքագծի սկզբունքներ են, որոնք օրենսդրորեն ամրագրված չեն, բայց կամավոր կերպով ընդունված են լրագրողական միջավայրում։ Հնարավոր է, որ մեր բարեկամ «արհեստական բանականության գործիքը» դրանք որոշ դեպքերում անտեսի։ Այնպես որ, լրագրողներն իրենց աշխատանքում, հատկապես խոցելի խմբերի խնդիրները լուսաբանելիս, պետք է կրկնակի ուշադիր լինեն դրանց պահպանման հարցում։

Միշտ պետք է հիշել, որ երբեմն ֆորմալ թվացող ձեւակերպումների տակ բազմաթիվ իրական էթիկական խնդիրներ կան, որոնց բախվում է ԶԼՄ-ի ցանկացած աշխատակից՝ սկսնակ լրագրողից մինչեւ փորձառու խմբագիր։ Լրագրությունը հրապարակային գործունեություն է, եւ դրանով պայմանավորված՝ լրագրողների կողմից էթիկական նորմերի խախտումները նույնպես շատ արագ դառնում են հանրային քննարկումների նյութ։ Լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմները կոչված են բարձրացնելու լրագրողների եւ լրագրության կատարելագործման հնարավորությունները, այսպես ասած՝ ներսի հայացքով դիտարկելու եւ շտկելու էթիկական խախտումները։ Լրագրողները դրան են ձգտում՝ հետեւելով կանոններին, նկատի ունենալով իրենց պարտականությունները, հանրային պատասխանատվությունը, մտածելով իրենց արարքների հետեւանքների մասին եւ ձգտելով լինել ոչ միայն լավ լրագրող, այլ նաեւ լավ մարդ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր
https://ypc.am/wp-content/uploads/2021/05/Code-of-Ethics_arm_May-15_2021.pdf

Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին
https://www.moj.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf

Sosiety of Professional Journalists. Code of Ethics
https://www.spj.org/ethicscode.asp

The Ethical Journalism Network
https://ethicaljournalismnetwork.org/

SAFETY GUIDE FOR JOURNALISTS: handbook for reporters in high-risk environments
https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000243986

Guidelines for journalists reporting on children
https://www.unicef.org/eca/media/ethical-guidelines

Ethical Guidelines for Journalists
https://www.unicef.org/afghanistan/media/2136/file/afg-publication_UN%20Ethical%20Guidelines%20for%20Journalists%20-%20English.pdf%20.pdf

Code of Ethics for Journalists and Reporters
https://www.unodc.org/pdf/youthnet/media/ethics_code_sample.pdf

Ethical Journalism and Human Rights
https://rm.coe.int/16806da54a

Guidelines on Media Reporting on Violence against Women
https://www.undp.org/serbia/publications/guidelines-media-reporting-violence-against-women

GUIDE FOR JOURNALISTS WRITING ABOUT VIOLENCE AGAINST WOMEN (UN)
https://www.wmmsk.com/2021/01/unmedia/

10 tips for reporting on LGBTQI+ communities
https://ijnet.org/en/story/10-tips-reporting-lgbtqi-communities

Accountable Journalism. Swedish Press Ombudsman: Code of Ethics for Press,
Radio and Television in Sweden
https://accountablejournalism.org/ethics-codes/swedish-press-ombudsman-code-of-ethics-for-press-radio-and-television-in-sw